# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 հունվար 2017թվականի N 01-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12 – Ի N 01 (ՀԵՐԹԱԿԱՆ) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14–րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1) Բյուրեղավան համայնքի 2016 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին

2) Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի N 119–Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

3) Բյուրեղաբան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի N110 բնակարանն անհատույց Վանիկ Հարոյանին օտարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՉՈԲԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

12 հունվար 2017թվականի N 02- Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասով ՝ ավագանին որոշում է.

1. Ի գիտություն ընդունել Բյուրեղավան համայնքի 2016 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7- Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՉՈԲԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունվար 2017թվականի N 03- Ն

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 – Ի N 119-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածովև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2017թվականի բյուջեն հաստատելու մասին» N 119-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝

որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հաստատել Բյուրեղավան համայնքի 2017 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի՝ ըստ հատվածների , որից

եկամուտների գծով ՝ 221041,9 հազար դրամ

ծախսերի գծով 287958,5 հազար դրամ

դեֆիցիտը / պակասուրդը / 66916,6 հազար դրամ

1) համայնքի բյուջեի եկամուտները՝ հատված 1,

2) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ հատված 2 ,

3) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3 ,

4) համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) հատված 4,

5) համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ հատված 5,

6) համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝

1) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
2) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

5. ՇԱՌՈՅԱՆ ԱՐԳԱՄ

6. ՉՈԲԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

12 հունվար 2017թվականի N 04-Ա

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ N 110 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՎԱՆԻԿ ՀԱՐՈՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596 հոդվածներով, հիմք ընդունելով բնակարանային հանձնաժողովի առաջարկությունը և Վանիկ Հարոյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1. Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 38.97ք.մ ընդհանուր մակերեսով N 110 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 118/119 սենյակներ) անհատույց օտարել Վանիկ Գառնիկի Հարոյանին՝ ծնված 1957 թվականի փետրվարի 2-ին:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում Վանիկ Հարոյանի կողմից:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ ______

2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ ______

3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐԹԻԿ ______

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ ______

5. ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ ______

6. ՉՈԲԱՆՅԱՆ ԿԱՐԻՆԵ ______

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ ______

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ